ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 դեկտեմբերի 2024 թվականի № 491-Ա

ՄՀԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի № 2335-Ն որոշման № 1 հավելվածի 3-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի՝ 2024 թվականի նոյեմբերի 13-ի № 457-Ա որոշումը և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի խորհրդական Մհեր Գևորգյանի 2024 թվականի դեկտեմբերի 4-ի № Ն/1463-2024 զեկուցագիրը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի խորհրդական ***Մհեր Գևորգյանին*** 2024 թվականի դեկտեմբերի 4-ին և 5-ին, երկու օրով գործուղել գյուղ Արամուս (*Աբովյան համայնք*)՝ «Արամուս վարչական շրջանի մանկապարտեզ», 2024 թվականի դեկտեմբերի 6-ին և 9-ին, երկու օրով գործուղել գյուղ Բալահովիտ (*Աբովյան համայնք*)՝ «Բալահովիտ վարչական շրջանի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների համար գույքի ձեռքբերման գործընթացի, ձեռքբերված գույքի քանակական և որակական համապատասխանության ուսումնասիրություն իրականացնելու համար:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությանը *(հաշվապահական հաշվառման բաժնին)* գործուղման հետ կապված ծախսերը *(օրապահիկ և ճանապարհածախս)* կատարել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի պահպանման ծախսերում գործուղումների համար նախատեսված միջոցների հաշվին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ա. ՍԱՀԱԿՅԱՆ**

2024 թվականի դեկտեմբերի 4
ք. Հրազդան